

Մրցութային փաստաթղթերի պարզաբանում #1, ԱՄՄ թիվ՝ CR4/NCB/B-G/017-17, Վանաձորի ԲԿ ՓԲԸ-ի Մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի համար բժշկական սարքավորումների և բժշկական կահույքի ձեռքբերում:

N	Հարցում	Պատասխան
1.	Հայտի լեզուն, ըստ փաստաթղթերի, հայերենն է, բայց նաև նշված է, որ որոշ փաստաթղթեր կարող են ներկայացվել այլ լեզվով, եթե դրանց կից առկա է նաև տվյալ փաստաթղթի ճշգրիտ թարգմանությունը: Խոսքը վերաբերվում է մասնավորապես Արտադրողի կողմից ստացված լիազորագրերին և որոշ այլ փաստաթղթերի: Արդյոք այդ փաստաթղթերը կարող են ներկայացվել անգլերեն լեզվով և համարժեք հայերեն թարգմանությամբ: Թարգմանությունը պիտի լինի ինչ-որ կերպ հաստատված (թարգմանչական գրասենյակի կնիք/նոտար), թե՞ ընդունելի է նաև հենց մեր ընկերության աշխատակիցների կողմից կատարված թարգմանություն:	Արտադրողների կողմից ստացված նամակ-լիազորագրերը և նմանատիպ փաստաթղթեր, կարող են ներկայացվել այլ լեզվով, համապատասխան ճշգրիտ թարգմանության ուղեկցությամբ, առանց հաստատման (թարգմանչական գրասենյակի կնիք/նոտար): Այնուամենայնիվ, սկզբնական օրինակի և թարգմանության միջև անհամապատասխանությունների դեպքում (ըստ ԳՀ-ի) կարող են պահանջվել նաև հաստատված տարբերակները:
2.	Հայտի ապահովման համար բանկային երաշխիք չի պահանջվում, ըստ փաստաթղթերի, այլ անհրաժեշտ է միայն լրացնել համապատասխան ձևաթուղթը: Խնդրում ենք ուղղակի հաստատել, որ բանկային երաշխիքի անհրաժեշտություն չկա:	Համաձայն Բաժին I՝ Ցուցումներ հայտատուներին 19.1 կետի պահանջների, պետք է պահանջվի կամ Հայտի ապահովման հայտարարագիր, կամ Հայտի երաշխիք՝ բնօրինակով, ինչպես նշված է Հայտաթերթում (Բաժին II) ՑՀ 19.1 պահանջվում է միայն Հայտի ապահովման հայտարարագիր:
3.	Փաստաթղթերում նշված է, որ բնօրինակներն ու կրկնօրինակները պիտի լրացված լինեն չնշվող թանաքով և այլն: Բայց արդյո՞ք այս մրցույթի համար անհրաժեշտ են լինելու բնօրինակ-կրկնօրինակներ՝ հաշվի առնելով, որ մրցույթը էլեկտրոնային է: Եթե հետագայում անհրաժեշտ է լինելու ներկայացնել նաև փաստաթղթային փաթեթը բնօրինակ-կրկնօրինակ տարբերակով, խնդրում եմ նշել անհրաժեշտ կրկնօրինակների քանակը:	Ինչպես նշված է Հայտաթերթում (Բաժին II) ՑՀ 22.1 մասնակիցները պետք է ներկայացնեն իրենց առաջարկներն էլեկտրոնային եղանակով՝ էլ-գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով: Բաժին I 20.1 կետի պահանջներով որ էլ-գնումների համակարգի միջոցով ներկայացվում է հայտի սկան

		տարբերակը. Էլ. ստորագրությամբ ներկայացված հայտը նույնպես ընդունելի է:
4.	Փաստաթղթերում տեղ գտած տեխ.բնութագրերը գրված են անգլերեն լեզվով: Արդյոք մասնակիցը պիտի՞ դրանք ևս թարգմանի հայերեն, տեխ.բնութագրերի համապատասխանության աղյուսակը կազմելիս:	Հայտաթերթի (Բաժին II) ՅՀ 11.1 (Թ) կետի պահանջին բավարարելու համար տեխնիկական բնութագրերի համեմատական աղյուսակը, կարող է ներկայացվել անգլերեն լեզվով, ինչպես հրապարակված է Գնորդի կողմից, VII Բաժին. Պահանջների ցանկում, 2-րդ կետով:
5.	2.1a կետում նշված ֆինանսական կայուն վիճակի մասին տեղեկանքը հատուկ ձևաթուղթ ունի՞: Այն պիտի կազմվի-ստորագրվի մասնակցի կողմից, թե՞ ՀՀ հարկային մարմնի հատուկ տեղեկանքի կարիք կա:	Հայտատուն իր ֆինանսական կայուն վիճակը պետք է վկայի հավաստող փաստաթղթերի միջոցով:
6.	Ապրանքների մատակարարման ժամանակ հաղթող մասնակիցը պիտի տրամադրի նաև օգտագործման ձեռնարկներ: Փաստաթղթերում նշված է Անգլերեն/Ռուսերեն/Հայերեն տարբերակներ: Սա նշանակում է, որ հաղթելու դեպքում մասնակիցը բոլոր 3 լեզուներով պիտի ներկայացնի ձեռնարկները, թե՞ միայն մեկով, կամ, ասենք, Անգլերեն և Ռուսերեն/Անգլերեն և Հայերեն:	Ինչպես նշված է IX Բաժին. Պայմանագրի հատուկ պայմանների ՊԸՊ 13.1-ի 4-րդ կետում, օգտագործման և սպասարկման ձեռնարկները պետք է ներկայացվեն կամ անգլերեն կամ Ռուսերեն կամ Հայերեն տարբերակով:
7.	ՊԸՊ 16.1 կետով նշված հաշվարկի ձևի մեջ, մեր կարծիքով, վրիպում է տեղ գտել, քանի որ ոչինչ նշված չէ հարակից ծառայությունների արժեքի մնացյալ 10%-ի վճարման ժամկետների/ձևի մասին: Խնդրում ենք պարզաբանել:	IX Բաժին. Պայմանագրի հատուկ պայմանների ՊԸՊ 16.1 կետով նախատեսված է նաև կանխավճարի տրամադրում Պայմանագրի արժեքի 10 (տաս) տոկոսի չափով, ինչը ներառում է նաև հարակից ծառայությունների գումարը:
8.	ՊԸՊ 16.5 կետում սահմանված չէ ժամկետը, որի համար հաշվարկվելու է նշված 0.02% տույժը: Դա օրեկան թե՞ շաբաթական տույժի չափն է:	IX Բաժին. Պայմանագրի հատուկ պայմանների ՊԸՊ 16.5 կետում նշված կարգով, միանվագ վճարում է իրականացվում,

		մատակարարին վճարման ենթակա գումարի 0.02%-ի չափով, ուշացված ժամանակահատվածի համար:
9.	Խնդրում ենք պարզաբանել ՊԸՊ 18.4 կետի ձևակերպումը, քանի որ առկա ձևակերպումը կարող է երկակի հասկացվել. • Կարող է նվազեցվել, թե՞ կնվազեցվի • Նվազեցվել մինչև պայմանագրի 3%-ի չափովը կարող է հասկացվել, որ կնվազեցվի 10%-ից մինչև 7%, այլ ոչ թե կնվազեցվի մինչև 3%:	Ինչպես նշված է IX Բաժին. Պայմանագրի հատուկ պայմանների ՊԸՊ 18.4 կետում, կատարման երաշխիքը (10%) կնվազեցվի կամ կփոխարինվի նորով, պայմանագրի արժեքի 3%-ի չափով, մինչև երաշխավորված պարտավորությունների կատարման ավարտը: